

ՀԱՅԵՐԵՆ ՄԵՏԱՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

2. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

«Եւ Ե՛հովայ Աստուածը շինեց հողիցը բոլոր դաշտի կենդանիները եւ երկնքի բոլոր թռչունները, եւ բերաւ Ադամի մօտ, որ տեսնէ թէ նորանց ինչ անուն կ'կոչէ, եւ ամեն ինչ որ Ադամը շնչաւոր կենդանին կոչեց՝ նա է նորա անունը: Եւ Ադամը բոլոր անասուններին եւ երկնքի թռչուններին եւ դաշտի բոլոր գազաններին անուններ դրաւ»¹:

Իսկ շատ ավելի ուշ՝ 1842-ին Վիեննայում տպագրված գրքի հայ հեղինակներն ավելացնում են. Աստված ոչ միայն կենդանիները ժողովեց ու ներկայացրեց մարդուն ճանաչելու համար, այլև «տրեկներն ու հանքերն ալ ամէն մէկը իր տեղը մէկին մէկին մեր առաջին կը-ժողվէ, կրերէ ու բնութեան մէջ գտնւած մարմիններուն բանը մեզի կպատմէ»²:

Այդուհանդերձ, հին աշխարհն անցել է զարգացման երկար ու դժվար մի ուղի, իսկ քաղաքակրթության պատմությունն սկսվում է այն ժամանակներից, երբ մարդ սկսել է մտովի իմաստավորել աշխարհը՝ իմաստ փնտրել իրեն շրջապատող առարկաների մեջ, և ըստ այդմ խմբավորել ու դասդասել դրանք: Իհարկե, դա կատարվել է ինքնաբերաբար, առանց որևէ կարգի ու հերթականության՝ կողմնորոշիչ ունենալով, թերևս, մարդու աստիճանաբար աճող կարիքների բավարարման անհրաժեշտությունը: Այդ առումով շատ հետաքրքիր է մետաղների ճանաչման (որի հերթականությամբ էլ քաղաքակրթության պատմությունը հետագայում բաժանեցին պղնձի, բրոնզի, երկաթի ժամանակաշրջանների) և գրանց անվանակոչության պատմությունը, որը հետին թվով անգամ կարող է բազմաթիվ հարցերի պատասխան տալ:

Հին աշխարհին հայտնի մետաղները, մի շարք հանածոներ ու «պատվական» (թանկարժեք) քարեր հնուց անտի հայտնի են եղել նաև Հայկական լեռնաշխարհի քնակիչներին: Այդ ժամանակները սկիզբ են առնում հայրենի գրավոր խոսքի ստեղծումից հազարամյակներ առաջ, որով և պայմանավորված է մինչև օրս մետաղանունների միանշանակ ստուգաբանության բացակայությունը, և մեծավաստակ Աճառյանը նմանը շունեցող իր բառարանում³ հաճախ բավարարվում է այդ մասին եղած տեսակետների զուտ համադրմամբ:

Հայկական լեռնաշխարհն ակտիվ տնտեսական ու առևտրական կյանքով սկսել է ապրել շատ վաղ ժամանակներից: Նրա հարավում՝ Իփրատի և Տրգրիսի միջին հոսանքներում, տեղադրվում էր աստվածաշնչյան դրախտը, հյուսիսում Աև ծովն էր՝ իր աշխույժ նավահանգիստներով ու վաճառաշահ քաղաքներով, որոնք դեպի Հայկական լեռնաշխարհ էին ձգում և՛ հին աշխարհի տիրակալ հզորներին, և՛ քոչվոր թափառական ցեղերի: Իրա հետևանքով առաջացել է տարբեր մշակույթների ու լեզուների յուրատեսակ մի խառնարան, որում փոխանակվել են աշխատանքային փորձ ու նյութեր (մետաղներ, հանքանյութեր և այլն), սովորույթներ ու բաներ (անվանումներ): Եվ պատահական չէ, որ ներկայումս այդ ինքնուրույն և ամբողջական մշակութային տարածքում ստեղծված մետաղանունների մեջ տարբեր ժողովուրդներ փնտրում են իրենց համապատասխան անվանումների սկզբնարմատը:

Հայկական լեռնաշխարհի քնակիչները նույնպես աշխարհաճանաչման գործընթացը սկսել են քարե գործիքներով: Այդ շրջանի մշակութային կայաններից հայտնաբերվել են գայլախազից ու օրսիդիանից պատրաստված գործիքներ՝ դանակ, կացին, արձանիկներ, ուլունքներ՝ մալաքիտից, զարդեր՝ սարդիոնից ու լեռնային բյուրեղից և այլն⁴:

Մետաղներից առաջինը, թերևս ոսկու հետ միաժամանակ, մարդը ճանաչել է բնածին

¹ Աստուածաշունչ, Շտուտգարտ, 1889, Ծ Բ 19, 20:

² Բնական պատմութիւն զոր յօրինեալ է աշակերտաց մեծի հօրն Մխիթարայ, Վիեննա, 1842:

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—4, Երևան, 1974—1979:

⁴ Бакс Каря, Богатства земных недр, М., 1986; Հայկական սովետական հանրագիտաբան, հ. 12, Ե., 1986, էջ 428:

պղինձը: Անցյալում տիրապետող տեսակետն այն էր, որ բնածին պղինձ առաջինը հայտնա-
բերվել է Եգիպտոսում՝ Սինայի թերակղզում մ. թ. ա. 7—6-րդ հազարամյակներում, և այդ
ժամանակներից սկսած նեղոսի հովտի բնակիչները պատրաստել են պղնձե զարդեր ու տար-
բեր իրեր՝ սանդղներ, դանակներ, բրիչներ, կերակրամաններ և այլն: Սակայն վերջերս մինչև
9—10 հազար տարվա հնության պղնձե մանր առարկաներ են հայտնաբերվել Տիգրիս գետի
վերին հոսանքի շրջանում, իսկ Եգիպտոսից ավելի վաղ խալկոպրիտից ստացված պղնձի
ձուլուկներ են գտնվել Սամսուն քաղաքի մերձակա կողմ տեղանքում: Հայկական լեռնաշ-
խարհում հայտնաբերված էնեոլիթյան (պղնձաքարի) բնականղինձը պատկանում են մ. թ.
ա. 5—4-րդ, մասամբ նաև 3-րդ հազարամյակներին⁵: Այլ տվյալներով դեռևս վաղ անցյալում
Եգիպտոսը բրոնզ ձուլելու համար անհրաժեշտ անագ ներմուծել է նաև Պարսկաստանից⁶:

Այսինքն՝ հին աշխարհի մետաղաձուլական, հետևաբար նաև հանքարդյունահանության
կենտրոնները գտնվել են կա՛մ Հայկական լեռնաշխարհում, կա՛մ հարակից երկրներում, և այդ
փաստի մասնագիտական դիտարկումը ներկայումս կարող է նոր մանրամասներ բացահայտել:
Թե ինչ է նշանակում «պղինձ» բառը, որը, ըստ Աճառյանի, փոխառված է իրանյանից,
դժվար է միանշանակորեն պատասխանել⁷, բայց այն, կոնկրետ մետաղ նշանակելուց բացի,
մեզանում եղել է նաև մետաղների դասակարգման առաջին շափանիշը: Հայերը հետագայում
իրենց ճանաչած մետաղներն անվանել են պղնձ և ղէնք ընդհանուր անվամբ, իսկ ավելի-
ուշ՝ նաև հրահալելիք⁸: Մեր կարծիքով, հանքային գործի պատմության վերջին շրջանի
ուսումնասիրությունները թույլ են տալիս մեկ անգամ ևս անդրադառնալ «պղինձ» և «բրոնզ»
բառերի կապի խնդրին: Հիշենք, որ «բրոնզ» բառի (եզրի) առաջացման վերաբերյալ կա մի
քանի տեսակետ. ա) այն առաջացել է լատ. brun «գորշ» բառից, բ) հիմքը լատ. obryzum
(obryzum aurum — կարկով փորձարկված ոսկի) բառն է, գ) բխեցվում է Խալիայի Բրուն-
դիզի (ներկայումս՝ Բրինդիզի) քաղաքի անունից, որտեղ վաղ անցյալում բրոնզից պատրաս-
տել են հայելի⁹ կամ Ադրիատիկ ծովի ափին գտնվող այդ նավահանգստով է բրոնզը ներ-
մուծվել Եվրոպա¹⁰:

Իսկ Մեյերն այդ բառը բղջնցում է հուն. βροντιστον (համաձուլվածք) բառից, որն իր
հերթին վերցված է պարսկերենից¹¹: Ահա այս վերջին մեկնաբանությունը կարող է նորովի
լուսաբանվել Բաբսի դիտարկումների հիման վրա¹²:

Ըստ Բաբսի, պղինձն առաջինը ճանաչվել ու արդյունահանվել է Եգիպտոսում, բայց աշ-
խարհին հայտնի է դարձել Կիպրոս կղզու միջոցով: Կիպրոսում բնածին պղինձը ճանաչվել է
Եգիպտոսից 400 տարով ուշ, իսկ հանքից պղնձի արտադրությունն սկսվել է մ. թ. ա. մոտ
1500 թվին: Կիպրոսի պղնձահանքերն իրենց հարստությամբ անմիջապես ուշադրություն են
գրավել, որին էպոսն նպաստել է կղզու դիրքը, և մետաղը Եվրոպայում տարածում է գտել
Կիպրոս, կամ Կիպրոսի պղինձ անունով:

Aes բառը լատիներեն նշանակում է պղինձ, որը ծագել է սանսկրիտ. ayes բառից, որն
իր հերթին դեռևս մ. թ. ա. 1500—1200-ական թթ. գործածվել է հին հնդկական վեդաներում
«երկաթ» իմաստով և նշանակում է «փայլուն»¹³, իսկ ավանդաբար այդ բառը կապում են
Կիպրոսի հին անվան հետ՝ Ajasia կամ Alasja, որին Ա. Խաչատրյանը հակադրում է իր տե-
սակետը, այն բխեցնելով հայոց Աղձնիք տեղանունից (Alše, Alzija, Alzi — Աղձնիք)¹⁴: Պլի-
նիոս Ավագն այդ aes բառն օգտագործում է ուղղակի պղինձ իմաստով, իսկ Կիպրոսի պղնձի
համար ունի aes cyprium անվանումը: Ի միջի այլոց, նա հիշատակում է նաև տարբեր
տեղանունների, մարդկանց անունների հետ կապված և պղնձի գույնով պայմանավորված այդ

⁵ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, 1978, էջ 55, В. А. Медкоян, Ис-
тория развития меди в Армении, Тезисы докладов, Е., 1974, стр. 361—365. Fr. Mor-
gan, dc, Mission Scientifique au Caucase, I, Paris, 1899, В. В. Латышев, Известия
древних писателей о Скифии и Кавказе, Вестник древней истории, № № 2—3, 1948.

⁶ Популярная библиотека химических элементов, т. 1, М., 1977, с. 42.

⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառաբան, հ. 4, 1986, էջ 88—89:

⁸ Տ. Ղազախյան, Քիմիան և նրա զարգացման ուղիները Հայաստանում (դոկտորական
ատենախոսության սեղմագիր), Ե., 1949, էջ 17:

⁹ «Каяя Илдиня Секунда Естественная история», С. Петербург, 1819, с. 259.

¹⁰ «Популярная библиотека химических элементов», т. 1, с. 50.

¹¹ А. М. Васильев, Происхождение названий химических элементов, «Уч. запис-
ки Казанского университета», т. 79, кн. 2, с. 41.

¹² Баке Карл, Богатства земных недр, М., 1986, с. 77—133:

¹³ Նույն տեղում, էջ 260:

¹⁴ Աստ. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Ե.,
1933, էջ 136—138:

մետաղի մոտ 10 տեսակ¹⁵։ Aes cyprium անվանումը մ. թ. ա. մոտ 300 թվին ձևափոխվել է cuprum-ի, իսկ աճելի ուշ դարձել պղինձ տարրի միջազգային անվանումը։

Մ. թ. ա. մոտ 2750 թ. Պիրենեյան թերակղզում անագաքարի հայտնագործումով հնարավոր եղավ պղնձից ստանալ աճելի ամուր մետաղ՝ բրոնզ համաձուլվածքը, որն իսկական հնազարդում առաջացրեց հասարակական կյանքում։ Եվ այդ ժամուր պղնձի համաձուլվածքը դեպի Պիրենեյան թերակղզի սեևոց հին աշխարհի հզորների ուղարկությունը։ Հայտնի են, մասնավորապես, ակկադեների թագավոր Սարգոնի և նրա նարամսին թոռան արշավանքները մինչև Զիրբալթար՝ անագ ձեռք բերելու համար։ Այդ ցանկությունը, ըստ Բաքսի, Կենտրոնական Եվրոպա է բերել նաև Հայկական լեռնաշխարհի հմուտ հանքագործ-մետաղագործներին, որոնք դեռևս մ. թ. ա. 3300 թ. գործիքներ են պատրաստել ձուլածո պղնձից։ Բաքսի կարծիքով, նրանք տեղում բրոնզ ստանալ չէին կարող, որովհետև Հայկական լեռնաշխարհում անագի հանքեր չեն եղել (գոնե այդ ժամանակաշրջանում)։ Նրանք գալով Եվրոպա, տեղաբնիկների համեմատ կրճատասակ լինելու պատճառով, ստացել են «կաուրիկներ» մականունը։ Իսկ մինչ այդ նրանք ահցել են Կարպատներով, ապա՝ Բալկանյան լեռներով, հայտնաբերել են ոսկու և պղնձի հարուստ հանքեր ու կազմակերպել արդյունահանություն։

Ուղագրավն այն է, որ այդ «կաուրիկները» իրենց հետ Եվրոպա են տարել հորատման այնպիսի գործիք, որը Պարսկաստանում հայտնի է եղել դեռևս մ. թ. ա. 4-րդ հազարամյակում¹⁶։ Այս փաստը խոսուն վկան է այն բանի, որ հիշյալ ժամանակաշրջանում զարգացած հանքագործություն, գուցե նաև պղնձաձուլություն, եղել է Պարսկաստանում։ Հետևաբար, Հայկական լեռնաշխարհի բնակիչ այդ «կաուրիկները» մետաղագործի հմտությունից ու հորատման գործիքներից բացի, Եվրոպա են տարել նաև իրենց պղինձ-բիրիչի-պիրիչի (պարսկ.) — բիրիչի (վրաց.) և նման այլ անվանումներ, որոնց, թերևս, ֆրանսիական տառադարձությունն է «բրոնզ» բառը։ Ասենք, որ Ֆրանսիայում անագ հայտնաբերվել է բրոնզի արտադրությունն սկսվել է մ. թ. ա. մոտ 2000 թվին։ Որպես պղինձ-բիրիչի-պիրիչի-բրոնզ անցման հնարավորություն անուղղակի փաստ կարող է ծառայել այն հանգամանքը, որ տեղաբնիկները «կաուրիկներին» հանդեպ մեծ հարգանք են տածել և նրանց մասին հետագայում գրավոր ու բանավոր պատումներ են ստեղծել։

Հետաքրքրական է նաև պղնձի հունարեն անվան՝ χρυλλος բառի ստուգաբանությունը, որը բխեցվում է նաև Փոքր Ասիայի Խաղտիք երկրի և քաղիքների (խալիքներ, խալդեր) անունից¹⁷։ Այդ հարցում տարածված տեսակետն այն է, որ հուն. «խալկոս» բառն առաջացել է սանսկրիտ ghalga — «մետաղ», որն իր հերթին սերել է ghal — «հուրհրալ», «փայլել» բառից։ Վասիլևը դրանից է բխեցնում նաև ռուսերեն՝ желесо — «երկաթ» բառը¹⁸։

Հայտնի է, որ Խաղտիք երկիրը գոյատևել է հին և միջին դարերում՝ Սև ծովի հարավ-արևելյան ափին։ Հույներն այն կոչել են Խալիք կամ Արմենոխալիք, իսկ բնակիչներին՝ արմենոխալիքներ։ Այն սահմանակից լինելով Բարձր Հայք և Տայք նահանգներին՝ միշտ բնակեցված է եղել հայերով¹⁹, իսկ երկիրն իրավամբ հուշակված էր իր ոսկու, պղնձի և երկաթի հարուստ հանքերով։ Այդ փաստի վրա են հյուսվել Պրոմեթևսի պատումը, Արգոնավորդներին և ոսկե գեղմի առասպելը։

Ուստի տրամաբանությունից զուրկ չէ տարբեր լեզուներով մետաղանունների և հատկապես «պղնձի» և «արծաթի» արմատները փնտրել նաև այդ տեղանվան կամ տեղաբնիկ ժողովրդի ինքնանվանման մեջ, ինչպես և վարվում են մի շարք հետազոտողներ²⁰, Ինհիճյանը, մասնավորապես, այդ հանքերի գոյության մասին բերում է Հոմերոսի հետևյալ արտահայտությունը՝ «Ալիք, ուր ծնանի արծաթ»²¹, և աճելացնում, որ Աստվածաշնչում հիշատակվող Թարսիսի ընտիր արծաթը²² Խաղտիքից (Սպեր) բերված և Կիլիկիայի Տարսոս քաղաքում վաճառված արծաթն է։ Դրանով, բնականաբար, Ալիքը կարող էր դառնալ արծաթը բնորոշող տեղանուն։

¹⁵ «Каия Плиния Секунда Естественная история», с. 10—18.

¹⁶ Бакс Карл, Богатства земных недр, с. 95.

¹⁷ Նույն տեղում։ Տ. Ղազանյան, Քիմիան և նրա զարգացման ուղիները Հայաստանում, էջ 5:

¹⁸ А. М. Васильев, նշվ. աշխ., էջ 10:

¹⁹ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, 1979, էջ 7:

²⁰ Աստ. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Ե., 1933, Н. Я. Марр, Скифский язык, Избр. работы, т. 5, 1935, Вяч. Вс. Иванов, Проблемы истории металлов на Древнем Востоке, ИФЖ, Е., (АН Арм. ССР), 1976, № 4, 2. Ղ. Ինհիճյան, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Կենտրոն, 1835 և ուրիշներ։

²¹ 2. Ղ. Ինհիճյան, նշվ. աշխ., էջ 189:

²² Աստվածաշունչ, Շտուտգարտ, 1989, Ե Թ 9:

Ղազանչյանն այդ երկիրը տեղագրում է Փամբակի ձորում՝ իր առաջին մետաղագործ խաչի բնակիչներով։ Այդ ցեղի անունը, — դրում է զիտնականը, — «խալչուք» (chalyb) դեռ մինչև այսօր էլ արևելյան ժողովուրդների մեջ ապրում է որպես մետաղագործության կարևորագույն միջոցներից մեկի՝ կաղպարի (ղալիթ) անուն։ Այդ ժողովրդի անունով հույները երկաթն անվանել են chalybs²³։

Այս դատողությունների յուրատեսակ շարունակությունն է, կարծես, Բաքսի այն պնդումը, թե մ. թ. ա. 9-րդ դարից սկսած լավորակ երկաթը պատրաստել են իրենց հալչ ստածու հետնորդներ համարած Հայաստանի թագավորների հպատակ խալիթները (ռուս. բնագրում халиберы)։ Քանի որ այն ժամանակ լավորակ երկաթը (պողպատ) ստանալու արհեստը դեռևս նրանց մենաշնորհն էր, ուստի հույները սովորական երկաթը լավորակից տարբերելու համար վերջինս անվանել են քալիթական²⁴։

Իսկ Խաչատրյանի բերած տեսակետներից մեկի համաձայն, «խալչուք» բառը հնչողությամբ բացատրվում է կովկասյան լեզուներով։ Մասնավորապես խալչերեն այն, «պղինձ» և «բրոնզ» նշանակելուց բացի, ունի նաև դարբնի, սովորիչի և «մուգ կարմիր» գույնի իմաստ²⁵։

Այսպիսով, հիշել մետաղանունների կապը Խաչատրի կամ քալիթ անունների հետ որքան էլ արտաբնատ անհնայտ է, այնուամենայնիվ քողարկված է վաղ ժամանակներից հատուկ անորոշությամբ։ Անհնայտ է ընդամենը, որ այդ երկրում արդյունահանվել է և ձուլվել են մետաղներ, իսկ տեղաբնիկ ժողովուրդներն ունեցել են հմուտ մետաղագործի համբավ։

Հայկական լեռնաշխարհում անուղի հանքաքարի բացակայության Բաքսի պնդումներ հակառակ է. Խանգաղյանը բրոնզի դարն այնտեղ դնում է մ. թ. ա. 4-րդ հազարամյակի վերջից²⁶։ Ժիշտ է, սկզբնական շրջանում նա նշում է միայն պղինձ-մկնդեղային բրոնզի գոյության մասին, բայց ավելի ուշ, դրան զուգահեռ, մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջից, նրա սովյալներով ձուլվել է նաև բրոնզ՝ պղնձից և անագից, որը մեզանում կոչվել է պարզապես անագապղինձ։ Ավելին, մ. թ. ա. արևել 2-րդ հազարամյակում մշակված հանքավայրերի թվում նա հիշատակում է պղնձի պաշարներով հարուստ Զուլամերիկ (պատմ. Մուսասիբը), անագով՝ Սասունի լեռները, կապարով, պղնձով ու երկաթով՝ Ռշտունյաց լեռները և այլն։ Միաժամանակ նկատում է, որ Հայկական լեռնաշխարհի բրոնզի դարին վերագրվող նմուշները (եիզակներ, կարճասայր խողովակակոթառ գեղարդներ, կոթառով դաշույններ, ժարտական սակրերի տարատեսակներ) ընդհանուր առևրս ունեն Հյուսիսային Կովկասի, Միջագետքի, Անատոլիայի, Պարսկաստանի Քալիչի հուլարձաններից հայտնաբերված նմուշների հետ։

Պղնձի մասին նյութն ամբողջացնելու համար ավելացնենք նաև, որ հին ժամանակներում ընդունված էր մետաղների հետ որոշակի գույների համադրումը, ինչպես, օրինակ, սպիտակ-«գեղին», արծաթ-«սպիտակ», երկաթ-«կապույտ», պղինձ-«կարմիր»²⁷։ Վերևում արդեն հիշատակեցինք պղնձի հետ կարմիր գույնի կապի մասին, իսկ «գեղին» բառը մեզանում «սուկու» համարժեք օգտագործելու վանեցիների սովորույթը հայտնի է։

Անագը պղնձից հետո իր կարևորությամբ մարդկությանը հայտնի երկրորդ մետաղն է, իսկ նրա համաձուլվածքը պղնձի հետ՝ առաջին արհեստական նյութը։

Հին հնդկական գրականության մեջ այս մետաղը նկարագրված է «տրպալու» անվամբ, իսկ նրա լատ. stannum անունը բխեցնում են սանսկրիտ. stha, sthavan բառերից, որոնք նշանակում են «ամուր, կարծր»։

«Անագ» բառը Աճառյանի կարծիքով մեզ կարող է անցած լինել ասորեստանցիներից ու չամբերներից, որովհետև ձևով ու իմաստով նման է նրանց բառերին՝ anaku, anaq²⁸։ Սակայն հայտնի է, որ ոչ ասորեստանցիները, ոչ էլ շամբերները անագի ու պղնձի հանքեր չեն ունեցել, այն ներմուծել են Իսպանիայից կամ Պարսկաստանից։ Հետևաբար նրանց «անագ» բառի արմատը պետք է այլ տեղ փնտրել։ Ի վանելը, մասնավորապես, գտնում է, որ այդ բանում որոշակի հետաքրքրություն կարող է ներկայացնել խլթ. dankua-li «անագ» բառը, որն առաջացել է dankui մուգ բառից²⁹։ Անագը մուգ կարելի է համարել թերևս արծաթի համեմատ, հետևաբար կարելի է ենթադրել, որ խլթերը մինչև այդ ծանոթ են եղել նաև արծաթին։ «Անագ» բառը որոշակի նմանություն ունի նաև շամբերների անգի կապակցությանը,

²³ Տ. Ղազանչյան, Քիմիան և նրա զարգացման ուղիները Հայաստանում, էջ 51։

²⁴ Տե՛ս К. Бакс, Ելդ. աշխ., էջ 237—238։

²⁵ Աստ. Խաչատրյան, Ելդ. աշխ., էջ 252։

²⁶ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, 1976, էջ 576—576։

²⁷ Н. А. Фигуровский, О происхождении древнерусских названий металлов. Материалы по истории отечественной химии, М.-Л., 1950, с. 260.

²⁸ Ըր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 9, 1974, էջ 177։

²⁹ Вич. Вс. Иванов, Проблемы истории металлов из Древнем Востоке, с. 72.

որը նշանակում է երկիր-երկինք: Կրամերի այս փաստի հիման վրա կարելի է ենթադրել, որ անագն ըստ շումերների, որոշ աղերսների է ունեցել Լրկնքի գույնի հետ³⁰:

Անագն անցյալում տարբեր ժողովուրդներ համարել են կապարի տարատեսակ: Մինչև օրս այլպես գիտեն արարները: Մետաղագիտության Աստվածաշնչում այն օգտագործված է միանշանակ՝ միայն անագ իմաստով, իսկ նրա կլայկ կամ կլայկակ հոմանիշներն առաջացել են անհամեմատ ուշ:

Կապարը մարդկությանը հայտնի է գրեթե անագի հետ միաժամանակ: Այդ մետաղներն ի սկզբանե իրենց առանձին անուններն են ունեցել Վեդաներում, Աստվածաշնչում, Հռոմեոսի գործերում և այլուր³¹: Բայց, ինչպես արդեն ասացինք, դրանք շփոթվել են նաև միմյանց հետ:

Հայերեն «կապար» բառը հնչողությամբ նման է արաբ. *ābūt* բառին³², որ նշանակում է կապար կամ հալած կապար: Հյունքնաբարձիչներն ալդ բառը հանում է «կարապ» թուրքերից³³, իսկ վերջինս՝ հուն. *χαρραβος*—նալ բառից³⁴:

«Կապար» բառը ունի նաև հայերեն «արծիճ» հոմանիշը:

Կապարը որպես կապարանյութ օգտագործելու հայտնի փաստը մեզ թույլ է տալիս առաջարկել նաև այդ բառի (կապար) առաջացման կաղապար—կաղապար—կապար հնարավորությունը: Իսկ մեր «կաղապար» բառը փոխառված է հուն. *χαλιπιδιον* «տառի փայտե կաղապար» բառից: Մեզ հայտնի է, որ գերմանացի առաջին տպագրիչ Իոհան Գուտենբերգը անագն տուներ ձուլում էր կապարե կաղապարներում, որովհետև այդ մետաղը փափուկ է, հեշտ է նրանից պատրաստել ցանկացած ձև, մինևույն ժամանակ դիմանում է մի քանի լըցման: Նա, թերևս, շարունակել է իրենից հազարամյակներ առաջ կաղապարների պատրաստած Միջագետքի հմուտ աղյուսագործներին, որոնք կապար մետաղը ճանաչելուց հետո իրենց փայտե կաղապարները փոխարինել են մետաղականով: Հավանաբար հենց այն ժամանակներում են մարդիկ զգացել այդ մետաղի անասելի ժանրությունը փայտե կամ կավե կաղապարների համեմատ, որովհետև կապարն այն ժամանակ հայտնի մետաղներից ծանր չէր, ինչը հետագայում արձանագրվել է Աստվածաշնչում. «Եզրիտացիք «կապարի պես ընկղմեցան» Կարմիր ծովը (Ծլ. ԺԾ 10, Թու. Ա 22, Եղեկ. Ի 12)»: Ի դեպ, «կապար» բառը մեզանում նույնպես օգտագործվում է նաև խստության, սուստկության, ծանրության իմաստով: Ահա այս մետաղե կաղապար, որի փայտե տարրերակին անտարակույս ծանոթ էին նաև մեր նախնիները, նրանք ըմբերների հետ ակտիվ շփումների ընթացքում ընկալել են այդ նոր որակով, և ժամանակի ընթացքում նրանց պատկանացման մեջ մետաղը և կաղապարը նույնացվել են, ինչպես, օրինակ, կենցաղում օգտագործված պղնձե կաթսաները դարձել են «պղնձ», շուգունե կաթսաները՝ «շուգուն» և այլն: Սկզբնական շրջանում ամենայն հավանականությամբ մետաղը կոչվել է պարզապես կաղապար, ավելի ուշ դարձել է կաղապար, որի գոյությունը հավաստում է Աճառյանը³⁵, և ի վերջո՝ կայարու Ավելացնենք նաև, որ Ֆիզիոլոգիկն ուս. *свинец* (կապար) բառը կապում է *бино* (գինի) բառի հետ՝ պատճառարանելով, որ անցյալում, մասնավորապես Կովկասում, կապարն օգտագործվել է գինի պահելու տարողություններ պատրաստելու համար³⁶:

Ոսկին բնածին փինակում հարվածից շնորհիվ ու մուրճով մշակվող նորահայտ այն նյութերից էր, որոնք տարրերվում էին սպարներից, և դրա շնորհիվ կոչվեցին «կոլի քարեր»: Մա մեզ հայտնի նյութերի դասակարգման առաջին նմուշն է: Այդ կոլի քարերը հետագայում ստացան մետաղներ ընդհանուր անունը:

Առաջին ոսկե պնդած զարդերը պատրաստվել են ավելի քան 7 հազար տարի առաջ և հայտնաբերվել Բուլղարիայի Վառնա քաղաքի գերեզմանատնից: Նուրիալում (Եզրիտոս) ավազից ոսկու լվացումը սկսել են մ. թ. ա. 4-րդ հազարամյակում, հալած ոսկուց թիթեղներ ձգում են մ. թ. ա. մոտ 1900-ական թվականներից: Իսկ հանքաքարից ոսկու ստացումը կատարվել է պղնձի ձուլման գործը յուրացնելուց զգալիորեն ուշ:

Արդեն նեոլիթի ժամանակներից ոսկին համարվել է հարստության և հեղինակության խորհրդանիշ, թագավորների ու փարավոնների մետաղ³⁷: Քրմերը պնդում էին, որ ոսկին առաջանում է Արեգակից և անձրևի տեսքով տեղում երկրի վրա:

³⁰ С. Н. Крамер, История начинается в Шумере, М., 1965, с. 100.

³¹ Տե՛ս Ա. Ն. Վասիլև, նշվ. աշխ., էջ 22:

³² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, 1978, էջ 522:

³³ Հ. Հրեմեմարտյեյնեան, Ստուգարանական բառարան հայ լեզուի, Կ. Պոլիս, 1894, էջ 167:

³⁴ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, 1978, էջ 545:

³⁵ Նույն տեղում, էջ 495:

³⁶ Տե՛ս Н. А. Фигуровский, նշվ. աշխ., էջ 264:

³⁷ Ա. Ա. Կուլ, Հին Հունաստանի լեգենդներն ու անասակները, Ե., 1980:

Տարբեր լեզուներով «սուկի» բառի առաջացումը կապում են մետաղի դեղին գույնի, արտակարգ փայլի, երկնքի, Արեգակի, լուսարացի և տիեզերական տարբեր երևույթների հետ³⁸։ Հայերեն «սուկի» բառը համահնչուն է սանսկրիտ vastu, իռլ. iost, ֆինն. wasti— «արույր», ինչպես նաև ակկադերեն gušiq, շումերերեն guškin, վրաց. okro— «սուկի» և այլ կովկասյան ձևերի հետ։ Հյուսիսարևելյանտեղի «սուկի» բառը հանում է «սուկի» բառից, իբրև իմաստով նրան հակառակ, այն է՝ կակուղ³⁹։ Իսկ մեր կարծիքով «սուկի» և «սուկր» բառերի միջև կապը պետք է փնտրել բոլորովին այլ աստված՝ նախ ասևեց, որ «սուկի» բառի նախահիմքը լատ. «os» բառն է, որտեղից նաև «սուկի», որն իր կարճուժյան պատճառով ոչ մի լեզվում չի պահպանվել անխաթար։ Իսկ «սուկին» «սուկրի» հետ կապելու կամ «սուկրից» բխցնելու հանգամանքը պայմանավորված է վաղ անցյալում ոսկու ստացման տեխնոլոգիայի մի նրբութունով։ Բանն այն է, որ ոսկին հանքաքարից հալմամբ դատելիս եզրպատական ջրմերն օգտագործել են ոսկրամոխրից պատրաստված հալոցներ և կապար։ Հանքաքարը կապարով մշակելիս նրանում եղած ազնիվ մետաղները հալվելով լուծվում էին հալած կապարի մեջ և զատվում ավազից։ Այնուհետև կապարի այդ հալույթը ենթարկվում էր օքսիդացնող թրծման, որի ընթացքում մակերևութային շերտի կապարը խառնուրդների հետ օքսիդանում և դուրս էր գալիս հալույթից, իսկ ոսկին և արծաթը մաքրվում էին։ Օքսիդացած կապարը շատ արագ ներծծվում էր ոսկրամոխրից պատրաստված հալոցի պատերի մեջ, մի բան, որը քրմերը խիստ գաղտնի էին պահում։ Կարելի է ենթադրել, որ բացառված չէ, որ քրմերի այդ գաղտնիքը հայերին հայտնի է եղել դեռևս հալմամբ ոսկին անջատելու գործի արշավույթին, որը նրանք օգտագործել են ոչ միայն ոսկի ստանալու և խառնուրդներից այն մաքրելու նպատակով, այլև «սուկրի» նման այդ մետաղի անունը «os» նախարառից կազմելու համար՝ «սուկի, ոսկի»։

«Սուկի» բառի ծագումը Մառը կապում է սկյուրների ցեղական՝ սկյուրիս, սկյուրտան, հետ, որից բխեցնում է նաև ոււււերեն 30.10.0.0 բառը։ Նրա այդ տեսակետը խիստ կասկածի տակ է անում Աֆրոլորովսկին, վիճարկելով «սկոլ» բառի ժամանակագրական առաջնությունը իրենց 30.10.0.0, նաև հայերեն «սուկի» բառերի նկատմամբ։

Արծաթը ավանդության համաձայն մարդկությանը հայտնի է դարձել Ջրհեղեղից հետո, որովհետև սր. Գրքում այն հիշատակվում է Աբրահամի ժամանակներից սկսած։ Սր. Գրքում օգտագործված է նաև արծաթ կենդանի արտահայտությունը, որը սնդիկն է։

Ըստ Աճառյանի, արծաթը բնիկ հայերեն բառ է⁴⁰, որի հնդեվրոպական ցեղակիցներն են սանսկրիտ. rajata—արծաթ, սպիտակ, հարս. ardata, ղենդ. արձատ, թուրքերեն. arkiyan—արծաթ, լատ. argentum, հռլ. argat և այլն։ Այս բոլորի արմատը հայերեն «արծ» բառն է, որ նշանակում է «սպիտակ, փայլուն»։ Դրա ժառանգորդներն են հուն. ἄργυρος—փայլուն, սպիտակ, սանսկրիտ arjuna—սպիտակ և այլ բառեր։

Երկաթը սր. Գրքում հիշատակվում է նախ իբրև մետաղ, գործիք, ապա նաև կապանքի, ամրության, զորության, համառության, քաջության, նաև նեղության իմաստով։

Երկաթի հայտնաբերումը հեղաշրջող նշանակություն է ունեցել մարդկության համար, դրանով սկզբունքորեն նոր ընթացք է ստացել քաղաքակրթության զարգացումը։

Հին Եգիպտոսը հանքային երկաթը չի ճանաչել, բայց դրանից շատ առաջ ծանոթ է եղել Երկնաքարային երկաթին։ Մարդիկ ակնատես են եղել տիեզերքից շփացած երկաթի՝ երկրի վրա թափվելու, որը և հիմք է ծառայել ենթադրելու, որ այն առաջանում է տիեզերքում։ Միաժամանակ դրանով են պայմանավորել տարբեր լեզուներով մետաղի անունները, օրինակ, հին եգիպտերեն՝ արենի—պիտո—«երկնքի մետաղ», հուն. σιδηρος, որը համանուն է լատ. sidus կամ sideris-ին, որոնք նշանակում են «աստղ, երկնային մարմին»։ Ֆիզիկոպետու կարծիքով⁴¹ նույն իմաստն ունի նաև հայերեն «երկաթ» բառը, այն է՝ երկ[նքից] կաթ[ած]։

Երկնաքարային երկաթից պատրաստված առաջին նմուշներից են մ. թ. ա. 3800 թ. վերագրվող վճռոցները, որոնք հայտնաբերվել են եգիպտական դամբարաններից, մ. թ. ա. 3100 թ. դաշույն՝ շումերական Ուր քաղաքից։

Հանքային երկաթի ստացման առաջին փաստը, Բաքսի տվյալներով⁴², արձանագրված է Եգիպտոսում հայտնաբերված կավե սալիկների վրա, ուր հստակորեն նշված է նաև տեղը՝ Հարավային Անդրկովկաս։ Երկաթի հանքաքարը Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել է պղնձի հանքերին մոտ, որը հանքագործներից զրավել է իր մետաղական փայլի և մուգ կարմիր գույնի շերտիկով։ Նրանում երկաթի պարունակությունն անցել է 50 %-ից, որի մասին, սակայն, հանքագործները չեն իմացել։ Ընդունված կարգով այն փորձել են հալել, բայց դա

³⁸ Տե՛ս Н. А. Фигуровский, նշվ. աշխ., էջ 253—256, А. М. Васильев, նշվ. աշխ., էջ 12։

³⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 566, Հ. Հյունեբաղվէնեան, նշվ. աշխ., էջ 35։

⁴⁰ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 8, էջ 317—318։

⁴¹ Տե՛ս Ն. Ա. Ֆիզիկոպետու, նշվ. աշխ., էջ 261։

⁴² Տե՛ս К. Бакс, նշվ. աշխ., էջ 224։

նրանց անմիջապես չի հաջողվել. հանքաքարն ընդամենն արծնապատվել է մակահալվածքի շնորհիվ, ամբողջ հանքաքարի հալման համար կրակի ջերմաստիճանը չի բավարարել: Այլ-ված մակերևույթ աչդոսեակ բարձր՝ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջին պատկանող, հայտնաբերվել են նաև Միջագետքում՝ զարգացած աշխուսագործության օրրանում: Միջագետքի և հատկապես Բաբելոնի հետ Հայկական լեռնաշխարհի բնակիչների առևտրական կապերն սկիզբ են առել դեռևս մ. թ. ա. 2500-ական թվականներից, նրանք Միջագետքին մատակարարել են ոսկի, պղինձ, փայտածուխ և այլ նյութեր: Իսկ այդ շրջանների ընթացքում իրենք սովորել են աղյուսագործության և կրակի ջերմաստիճանը փյուհարմամբ կարգավորելու ներբուխայինները, մի բան, որը հնարավոր դարձրեց երկաթի հանքաքարի հալումն ու երկաթի ստացումը: Բարձր կարծիքով, դա կատարվել է մ. թ. ա. մոտ 1600-ական թթ., երբ Անդր-կովկասում հաջողվեց ստեղծել առաջին օգամուռ սարքերը (փուսերը, որոնք մինչև օրս պահպանել են իրենց կիրառությունը Հայաստանի գյուղերում), իսկ հալոցները պատրաստել են անմիջապես գետնի (հողի) մեջ⁴⁵:

Այդ ժամանակ արդեն բրոնզը լայն ճանաչում էր գտել նաև Անդրկովկասում, իսկ լավորակ երկաթ դեռևս չէր ստացվում, անջատված մետաղն իր ամրությամբ դեռ բրոնզին զիջում էր: Այնուամենայնիվ հայտնագործությունը կատարվեց, թերևս պատահականորեն, բայց կատարվեց. երկաթի ամրությունն անհամեմատ բարձրացավ, այն ածխի վրա երկրորդ անգամ շիկացնելուց և չրում թրծելուց հետո: Այդ ընթացքում տեղի էր ունենում, մեզ արդեն հայտնի, երկաթի մակերևութային պողպատացում: Դրանով հնարավոր դարձավ ստանալ իր ամրությամբ բրոնզին անհամեմատ զերպանցող մետաղ, որով պատրաստված աշխատանքային գործիքներն ու զենքերը պայմանավորեցին պատմության նոր ընթացքը՝ անցումը երկաթի դարին:

Պողպատված երկաթի մասին առաջին տեղեկությունն արձանագրված է մ. թ. ա. 1400 թ. կավե սալիկների վրա, ըստ որի «Տիրազալը Հարավային Անդրկովկասի և Հայաստանի, Միտանի երկրի թագավորը» եգիպտական փարավոն Ամենհոտեպ 2-րդին ուղարկել է «318 հարճի հետ և դաշույններ ու օդեր պողպատված երկաթից»⁴⁶:

Դրանից 15 տարի անց, երբ Միտանիի թագավորությունը գրավեցին խեթերը, նրանց առաջնորդ Խատուշիլ 2-րդը գրում է փարավոն Քուֆանհամոնին. «Ենչ վերաբերում է լավորակ երկաթին, որի մասին Դուք գրել եք ինձ, ապա այն գտնվում է Կիսվադնայում (դա հետագայի Կապադոկիան է): Իմ գանձարանում դրանից չկա: Ժամանակը բարեհաջող չէր երկաթ ստանալու համար, բայց ես կարգադրել եմ, որպեսզի պատրաստեն լավորակ երկաթ: Ներկայումս նաև դեռ պատրաստ չէ: Երբ այն պատրաստ լինի, ես կուղարկեմ Ձեզ: Այժմ ուղարկում եմ միայն դաշույնների շեղքեր»⁴⁷:

Ուշադրություն դարձնենք «լավորակ երկաթ», վերևում նաև «լավորակ պղինձ», արտահայտության վրա, որոնք հետագայում փոխարինվեցին համապատասխանաբար «պողպատ» և «բրոնզ» եզրերով, և մենք կռեսենք անվան առաջացման, նրա ձևավորման գործընթացը. անունն անմիջապես չէ, որ ստեղծվում է, սկիզբ առնելով ընդամենը որակը մատնանշող ածականից՝ «լավորակ», միայն ժամանակ անց, հանգամանքներից կախված, իր վերջնական տեսքն է ստանում:

Խեթերը, տիրանալով այդ «լավորակ երկաթ» ստանալու եղանակին, այն հարևան երկրներից գաղտնի պահեցին մինչև մ. թ. ա. մոտ 1200-ական թթ., այնքան ժամանակ, քանի դեռ նրանց կայսրությունը չկործանեցին փղշտացիք: Այդ եղանակին տիրանալով՝ փղշտացիները նույնպես մեծ օգուտներ առացան, պատրաստեցին այնպիսի զենքեր ու մարտական կառքեր, որոնցով կարողացան հաղթել եգիպտացիներին ու մ. թ. ա. 1180 թ. գրավել Քանանը, որը հետագայում նրանց անունով կոչվեց Պաղեստին⁴⁸:

Մենք վերևում արդեն խոսեցինք քալիբրների հմուտ մետաղագործության մասին: Ավելացնենք, որ Բաբել, որպես ասվածի նյութական ապացույց, բերում է Մենուայի կամ, ինչպես բնորոշված է ասել, Շամիրամի քրանցքի կառուցման փաստը մ. թ. ա. մոտ 800-ական թվականներին, մի բարդ հիդրոտեխնիկական կառույց, որն ունի 80 կմ երկարություն և խմելու ու ռոտզելու ջուր է մատակարարել մայրաքաղաք Տոպպին (Վանին), և անհնար էր կառուցել առանց ամուր երկաթե գործիքների:

Պետք է ենթադրել, որ այդ ամենին քաջատեղյակ էր էսքիբսը (մ. թ. ա. 525—456), որպեսզի իր «Պրոմեթևսը շղթայված» ստեղծագործության մեջ Հայաստանն անվաներ «երկաթի հայրենիք»⁴⁹:

⁴⁵ Նույն տեղը, էջ 234:

⁴⁶ Նույն տեղը, էջ 236:

⁴⁷ Նույն տեղը, էջ 236—237:

⁴⁸ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, 1986, էջ 346:

⁴⁹ Տե՛ս К. Баке, նշվ. աշխ., էջ 27, 226:

«Երկաթ» բառը տարբեր լեզուներով տարբեր ծագում ունի, կապված է մեծադի ամբու-
թյան, փայլի, երկնածին լինելու և այլ հանգամանքների հետ: Աճառյանի դիտարկած տեսա-
կետներում զերակշռողն այն է, որ երկաթը, ոսկի և պղինձ անվանումների նման, ունի կով-
կասյան ծագում: Հնչողութայնք նրան նման են վրաց. րկինա, կինա, լազերեն երկինա, kina—
«գանակ», իմեր. kina—«երկաթ, երկաթե զինք»: Որոշ նմանություններ ունեն արլ. ֆինեա-
կան «երկաթի» տարբերակները՝ վագ. ker, kier, օստյակ. karti, karta, վոսյ. kort⁴⁸: Ավե-
լին, հայերեն «խաչերկաթից» են սերած հուն. xacirget, արար. xacərgat, ասու. кочерга
և մի շարք այլ նույնիմաստ բառեր:

2. Հյուսիսարավելյեանանը⁴⁹ «երկաթ» բառը բխեցնում է հուն. ε'ΡΥ'ΑΤΙΣ բառից և ստու-
գաբանում է որպես աշխատավոր, վատակավոր, գործոն (տաճկ. իրդատ), հակառակ ար-
ծաթի՝ հուն. 'ΑΡΥ'ΙΡΟΣ, որը նշանակում է ծուլ, դանդաղ:

Մենք արդեն վերևում տեսանք, թե ինչպես նույն նախալեզվի միևնույն բառը կարող է
հիմք ծառայել տարբեր լեզուներով տարբեր մետաղանուններ կազմելու համար: Այդ առումով
լի բացատրում նաև միևնույն լեզվի նույն նախաբառից տարբեր մետաղանունների առաջաց-
ման հնարավորությունը: Մեր կարծիքով, նման փաստի դրսևորում կարելի է դիտել հայերեն
արծաթ և «երկաթ» բառերի գոյությունը: Հայտնի է, որ այդ բառերն առաջացել են հա-
մապատասխանաբար արծ և նրկ բառերի և ար մասնիկի միավորմամբ: Այսինքն՝ անցման
հնարավորությունը պետք է փնտրել արծ-երկ ճանապարհով: Իսկ դրանց միմյանցից բխելու
հնարավորությունն ակհհայտ է դառնում, եթե արծաթ բառը համադրենք երկաթի՝ մինչև օրս
կովկասյան, մասնավորապես դարբարայան, հայ բարբառներում օգտագործվող արկաթ հո-
մանիչի հետ: Արծաթ—արկաթ—երկաթ անցումն այս ճանապարհով ավելի քան հնարավոր է
թվում:

Մյուս կողմից, եթե ենթադրենք, որ -աթ վերջադիր մասնիկն ունի գույնը մատնանշող
վերջածանցի՝ -ավուն, իմաստ, ապա մեր երկաթ և արծաթ բառերը կստանան երկնավուն և
արծնավուն իմաստները, որոնք շատ լավ տեղադրվում են վերևում հիշատակված հին ժողո-
վուրդների ունեցած մետաղ-գույն պատկերացումների շրջանակներում:

Մետաղների ճանաչման և օգտագործման, արդյունահանության և մշակության պատմու-
թյան հարցերով զբաղված Այաշեստի հետևյալ աղյուսակը, մեր կարծիքով, յուրատեսակ ամ-
փոփում կարող է ծառայել մինչև այժմ շարադրված նյութի համար⁵⁰:

Մետաղը	Առաջին արտադրությունը	
	տարիթիվը մ. թ. ա.	տեղը
Ոսկի	5000-ից վաղ	Հայաստան—Անատոլիա
Պղինձ (հանքանյութից)	4300	Հայաստան—Անատոլիա
Բրոնզ	4300	Հայաստան—Անատոլիա
Կապար	3500	—
Արծաթ (ոսկի չպարունակող)	2500	Փոքր Ասիա (°)
Անագ	1800—1500	Հյուսիս-Արևմտյան Պարսկաստան

Հայկական լեռնաշխարհում ոսկու, արծաթի, պղնձի և երկաթի վաղ արդյունահանության
մասին վկայում է նաև այն փաստը, որ անցյալում այդ անուններով մեզանում կոչվել են
բազմաթիվ հանքավայրեր, լեռներ, նաև գետեր ու քնակավայրեր⁵¹:

Մնդիկը Հայկական լեռնաշխարհի հանքային հարստությունների շարքում Ինժինյանք,
լի հիշատակում: Իսկ ար. Գրքում այն հիշվում է արծաթ կենդանի ձևով, որը լատ.
argentum vivum բառի ուղղակի թարգմանությունն է: Իս, ըստ Պլինիոսի⁵² բնածին սնդիկն
է, ի տարբերություն ջրարծաթի, որն ստացվում է կինարարից՝ արհեստական ճանա-
պարհով:

«Սնդիկը» հնչողությամբ նման է պարսկ. zanda—«կենդանի», սանսկրիտ. skanda—
«սնդիկ» բառերին: Վերջինիս նախնական ձևը skand—«ցատկել, ելնել» արմատն է, որից
բխեցնում են նաև հայերեն ցունդ «սփռվել, տարածվել, ցրվել» առանձին անգործածական
արմատը: Կարծում ենք, որ այս վերջինը հիմք է ծառայել «սնդիկի» առաջացման համար:

⁴⁸ Ըր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 58—60:

⁴⁹ Ը. Հինգեսարավելյեանան, եշվ. աշխ., էջ 31:

⁵⁰ Z. Aitcheson, A History of Metals, vol. 1, 2, L., 1960.

⁵¹ Ս. Ս. Երևիյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Ե., 1963:

⁵² Ը. Պ. Ինժինյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենե-
տիկ, 1885: «Каяя Плиния Секунда Естественная история», С.-Петербург, 1819, с. 41:

հակառակ այն բանին, որ Հյուսիսարևելյան կողմից այդ արմատը է հունում անդրիկ բառից⁵³։ Մի բան փաստ է, սակայն, որ այս մետաղի անվան ընտրության հարցում, որը մյուսներինց տարբերվում է հեղուկ լինելու իր առանձնահատկությամբ, մեր նախնիներն առաջնորդվել են այդ հեղուկի տարածվելու, սփռվելու, ցնդելու հատկությամբ։

Հաջորդ երկու մետաղը, որոնք համարվում են մարդկությանը ծանոթ դեռևս նախապատմական ժամանակներից, ներկայիս արսենն ու անտիմոնն են, որոնք 19-րդ դարի հայ քիմիական գրականության մեջ կոչվել են նաև զառիկ և ծարիր համապատասխանաբար։ Բայց այդ ծանոթությունը եղել է միջնորդված. մարդիկ ճանաչել են ոչ թե անմիջապես մետաղները, այլ նրանց տարածված միներալները, որոնք և կոչվել են համապատասխանաբար զառիկ (մկնդեղ) ու ծարիր, իսկ մետաղները բացահայտելուց հետո՝ առաջինը՝ 1694 թվին, երկրորդը՝ 15-րդ դարում, այդ անունները նույնությամբ փոխանցվել են համապատասխան մետաղներին։ Հետևաբար, շփոթ շտապացնելու համար անմիջապես ասենք, որ անցյալում զառիկ և ծարիր սանրվ մարդիկ հասկացել են միայն հանածոները (այդ մետաղների սուլֆիդները)։

Հայ մատենագրության մեջ զառիկ կոչվել է հուն. $\alpha\rho\sigma\epsilon\nu\lambda\omicron\nu$ անվամբ հայտնի հանածոն, որով հույները կոչել են բնական միներալներ կարմիր ռեալգարն ու ոսկեդեղին աուրիպիգմենտը։ Արսենիկոն անունն առաջինը հանդիպում է Արիստոտելի աշակերտ Թեոֆրաստի գործերում և ստուգաբանվում է իբրև $\alpha\rho\sigma\eta\nu$ —այր և $\chi\rho\omega\mu\alpha$ —ներկ, այսինքն՝ տղամարդու ներկ։ Եվ որպես այդ հավաստող հիմք՝ բերվում է այն փաստը, որ անցյալում գեղանկարիչները տղամարդկանց պատկերները նկարել են դեղին գույնով, կանանցը՝ սպիտակ⁵⁴։ Մեկ այլ ստուգաբանությամբ այդ բառը կազմված է այր և $\nu\lambda\alpha\omega$ —սպանում եմ բաղադրամասերից, հետևաբար նշանակում է այրասպան, հավանաբար այդ միացության թունավոր հատկության պատճառով։ Կասկած չկա, որ նույն հիմնավորումն ունեն նաև մեր մկնդեղ, ռուս. мышьяк և նույնիմաստ մի շարք այլ տարալեզու հոմանիշներ⁵⁵։

Ձ առիկ, Մովսես Խորենացու տվյալներով, հանվել է Կորճալքում, կոչվել է նաև զեղին մկնդեղ։ Ինչպես վերևում ասացինք, այն վաղ անցյալում լայնորեն օգտագործվել է պղինձ-մկնդեղային բրոնզի արտադրության համար։ Միաժամանակ, որպես ինքնուրույն ներկանյութ, արտահանվել է Հայաստանից, որը տարրեր հեղինակներ շփոթել են հայկական կավի և անմենիում անվամբ հայտնի հանածոյի հետ⁵⁶։

Հստ Աճառյանի, «զառիկը» փոխառված է պարսկ. zarnik , zarnik բառերից, որոնց արմատը zar -ն է և նշանակում է դեղին, ոսկեգույն⁵⁷։ Զառ և նրա հիման վրա կազմված տարբեր բառեր լայնորեն օգտագործվել են հայերեն գրավոր խոսքում՝ դեղին և ոսկեդեղին իմաստով։

Օ առիրն ունի նաև ծարոյր, ծարուր հայերեն հոմանիշները։ Այն սբ. Գրքում հիշատակվում է բազմիցս՝ իբրև սնդույրի բաղադրամաս։ Նրանից պատրաստված սև փոշին հատկապես արևելքի կանայք, ինչպես նաև արաբ տղամարդիկ, օգտագործել են աչքերը ներկելու (խոշորացնելու) նպատակով։ Նրա հենց այդ կիրառության հիման վրա էլ առաջացել է հանածոյի, հետևաբար նաև մետաղի անունը։

15-րդ դարի վերջերին այդ միներալից հաջողվել է ձուլել մաքուր մետաղ՝ «ծարիրի արքայիկ», որի համաձուլվածքը կապարի հետ օգտագործվել է տպատառեր պատրաստելու համար։ Փաստորեն տպագիր խոսքի առաջացման համար մարդկությունը պարտական է անտիմոնի հայտնագործությանը։ Նրա հուն. $\alpha\nu\tau\mu\omicron\nu$ անունը, որը նշանակում է «ծաղիկ». պայմանավորում են այն բանով, որ այդ հանածոյի ասեղնավոր բյուրեղները հիշեցնում են բարձրածաղկավոր բույսերի ծաղիկները։ Մյուս կողմից գտնում են, որ այդ անունն առաջացել է արաբերեն altmoud կամ al itimid բառերից, որոնք նշանակում են ծարիր։ Կա նաև ծիծաղաշարժ մի վարկած՝ կապված բենեդիկտյան կրոնավոր Բարսեղ (Վասիլի) վալենտինի անվան հետ, որն, իբր, 1413 թ. իմաստիսարական քարի փնտրտուքներում ձեռքի մոզական նյութը՝ ծարիրը, խոզերին կերցնելուց և նրա պարարտացնող ազդեցությունը բացահայտելուց հետո այն տվել է նաև ուխտի միաբաններին, որոնք, սակայն, թունավորվել և մահացել են։ որտեղից և բխել է anti-monium բառը, այսինքն՝ հուն. $\alpha\nu\tau\iota$ —հակառակ և $\mu\omicron\nu\omicron\varsigma$ —միոյ

⁵³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Կ. 4, էջ 482։

⁵⁴ $\text{Sb}'\text{u}$ А. Н. Васильев, նշվ. աշխ., էջ 25։

⁵⁵ Н. А. Фигуровский, О происхождении древнерусских названий металлов. Материалы по истории отечественной химии. М.-Л., 1950, с. 266., 2. Ս. Նոնիյան, Հանք և իրենց ստուգաբանությունը, Բազմալէզ, 1889, էջ 258։

⁵⁶ Զ. Ղ. Ինճիյան, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 181։

⁵⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Կ. 2, էջ 81։

հակառակ միանձանց⁵⁸, Պլինիոս Ավագն այս նյութի համար ունի ստիրիում, ստիմի, ալաբաստր և լարրազոն անունները⁵⁹, իսկ նյութը ներկայացնում է որպես սպիտակ, փայլուն և անթափանց փրփրատիպ քար։ Լատիներեն stibium բառն իր հերթին ծագել է հուն. Στίβιον կամ Στίμμον բառերից, որոնցով հույներն անվանել են ծարիրը (ներկայիս անստիմոնի եռօւլֆիդը)։

Հայերեն թարգմանություններում ծարիր բառն օգտագործվել է միանշանակորեն ստիրիում բառի դիմաց։ Անատյանը գտնում է, որ հայերեն «ծարիր» բառը կարող է ծագած լինել սանսկրիտ śihur—ներկել, արաբ. barur—աչի դեղ բառերից։ Վերջինս իր հերթին բխել է bar—աչքին ծարիր քսել՝ փոշիանալ, փշրել արմատից⁶⁰։ Մեր բառին համահունչում է կույր, պարսկ. «զարիր» բառը, որը, սակայն, իմաստով բոլորովին տարբեր է, նշանակում է կույր։ Հետևաբար, ինչպես մի շարք լեզուներով, այնպես էլ հայերեն «ծարիր» նշանակում է ներկել, փոշիանալ, քսվել, այսինքն՝ պայմանավորված է այդ հանածոյի կիրառական (ֆունկցիոնալ) նշանակությամբ։

Կատարված վերլուծության ու համադրումների արդյունքում կարող ենք եզրակացնել, որ հայերը, ինչպես վաղ քաղաքակրթության տեր բազմաթիվ ժողովուրդներ, անհիշելի ժամանակներից են ճանաչել հին աշխարհին ծանթ 7 մետաղներն ու մետաղի համարում ունեցող 2 հանածոները։ Ավելին, ունենալով այդ մետաղների մեծ մասի բնական պաշարներ, հանքաքարից առաջին հրկաթ ստանալու հմտություն, նրանք դրանց հիմքի վրա ստեղծել են զարգացած մետաղածուլություն ու մետաղամշակություն և առևտրական լայն կապերի մեջ են եղել հարակից երկրների ու հատկապես Միջագետքի հետ։ Նմանօրինակ գործունեություն ու հարաբերությունների արդյունքում Հայկական լեռնաշխարհում ձևավորված ինքնուրույն մշակութային ու լեզվական օջախում էլ առաջացել են հայերեն մետաղանունները, որոնց առաջացման վրա հունարենի և հատկապես լատիներենի ազդեցությունը փոքր է։

Մետաղների հետ անմիջականորեն շփվելու և մոտիկից ճանաչելու հնարավորությունը մեծապես նպաստել է, որպեսզի հայերեն առաջին մետաղանուններն առաջանային ոչ թե վաղ ժամանակներին քնորոշ գերբնական պատկերացումների հիման վրա, այլ նրանց ֆիզիկական, ապա նաև կիրառական նշանակությունների աստիճանական ճանաչման բնական ճանապարհով։ Այսպես, անագ, ածաք, երկաթ, զտիկ, մասամբ նաև պղինձ անվանումներն առաջացել են այդ նյութերի գույների հիման վրա։ Մեր կարծիքով, տրամաբանական է արծաթ և երկաթ անունների -աթ մասնիկի մեջ գույն մատնանշող իմաստ (-ավուն) փնտրելը, որի արդյունքում արծաթը մի ժամանակ կրկնավի նաև արծնավուն, երկաթը՝ երկնավուն իմաստներով, մի բան, որը հստակորեն համապատասխանում է անցյալում ընդունված մետաղ-գույն (մեր դեպքում՝ երկաթ-կապույտ) համադրման պատկերացումներին։

«Սնդիկ» անվան ծագումն ակնհայտ է. այն առաջացել է «ցունդ» արմատից, որը պայմանավորված է մետաղի հեղուկ լինելու և ցնդելու, ցատկելու, տարածվելու մենախորհով։

Կապաքը և ծարիրն անվանվել են այդ նյութերի կիրառական նշանակություններից ելնելով։ Ծարիրը նշանակում է ներկել, քսվել, փոշիանալ, իսկ «կապար» բառը, մեր կարծիքով, կարող է առաջացած լինել «կաղապար» բառից ժամանակի ընթացքում ձևափոխման ճանապարհով, և պայմանավորված է այդ մետաղը մետաղներից առաջինը կաղապար պատրաստելու համար օգտագործելու հանգամանքով։

«Ոսկի» անվան առաջացման հարցում, մեր կարծիքով, ուշադրության արժանի է մետաղական ոսկին անցյալում հանքանյութից անշատելիս սակրամոնիից (ոսկր բառի հիմքը համարվում է լատ. os բառը) պատրաստված հալոցների օգտագործման փաստը օս—ոսկի—ոսկի։

Մի ժամանակ կարևոր ենք համարում հայերեն «պղինձ» բառի դերը քրեղ անվան առաջացման հարցում, ինչպես նաև արծաթի արծ-արգ արմատի նախաբառ լինելու հանգամանքը՝ լատիներեն և նրան մերձավոր լեզուներով համապատասխան անվանումների համար։ Բերված մետաղանունների այնքան ամուր են արմատավորվել մեր նախնիների պատկերացումներում, որ հայերեն առաջին իսկ գրավոր գործերում, ինչպես նաև Մեսրոպյան Աստվածաշնչում, անմիջապես գտել են իրենց միանշանակ կիրառությունը։

Օ. Մ. АИВАЗЯН—К вопросу о возникновении армянских названий металлов.— Установлено, что армяне подобно другим раннецивилизированным народам познали металлы и металлоподобные ископаемые еще в глубокой древности. Располагая богатыми ресурсами металлических ископаемых, они развивали собственное металлол-

⁵⁸ Չ. Ս. Երևյան, Հանք և իրենց ստուգաբանությունը, Բազմավէպ, 1890, էջ 53։

⁵⁹ «Каша Плиния Секунда Естественная история», с. 323.

⁶⁰ Չ. Անատյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, 1978, էջ 449—450.

тейное производство и торговали этой продукцией с соседними странами. В среде подобного рода производственных и торговых отношений, образовались названия металлов, в которых не чувствуется давящего влияния греческого и латинского языков.

Критериями этих названий стали физические и прикладные свойства металлов. Так, анаг, арцат, еркат и зарик (олово, серебро, железо, мышьяк) были обозначениями их цвета.

Название «сндик» (ртуть) возникло от корня «сдунд» (*σνδνδ*), который означает прыгать, быть подвижным. Это, как известно, самое характерное свойство жидкого металла.

Слово «капар», (свинец), по нашему мнению, происходит от «кахапара» (шаблон, форма), поскольку из этого металла в древности (и в настоящее время тоже) изготавливали шаблоны для литья глины. А «царир» (стибний), означает красить, намазывать, поскольку этот металл широко использовался как косметическое средство на Востоке. На наш взгляд, слово «воски» (золото) может иметь определенную связь с латинским корнем «ос» (ос-оски-воски), объясняемое применением в древности костевого пепла в процессе очистки выплавленного золота от разных примесей. Предполагается, что слово «пгиндэ» (*πγινδᾶ*) может быть своеобразным прототипом «бронзы», а на армянском корне «арц—арг» построены названия серебра и связанные с серебром выражения в латинском и родственных с ним языках. Указанные названия металлов укоренились в армянском языке еще в глубокой древности и нашли свои однозначные применения, в первых письменных трудах.